



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

“19” 09 2019թ.

N. 01/15.2/14492-19

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
Ինգա Զարաֆյանին

Հարգելի տիկին Զարաֆյան

ՀՀ վարչապետին ուղղված Ձեր գրությունը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ և Ձեզ ենք տրամադրում վերջիններիս կողմից ներկայացված դիրքորոշումները:

9/19/2019

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

Հարգանքով՝



Վ. Տերտերյան



ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ.փոստ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 613
E-mail: scws@scws.am

<<____>> _____ 2019թ. N _____

Ձեր _____ 2019թ. N _____

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար
պարոն Ս. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան

Ի կատարումն Ձեր 13.08.2019թ. N01/15.2/11332-19 հանձնարարականի՝
կապված <<ԷկոԼոյր>> տեղեկատվական ՀԿ-ի կողմից բարձրացված հարցերի
վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար և Տարոնիկ, ՀՀ
Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքները <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից
չեն սպասարկվում: Նշված բնակավայրերի խմելու ջրի մատակարարման
համակարգերն ընդգրկված չեն Ջրային կոմիտեին ամրացված գույքի ցանկում:
Դրանք հանդիսանում են համայնքային սեփականություն և սպասարկվում են
տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Ինչ վերաբերում է ՀՀ Արարատի մարզի Հայանիստ համայնքի Գետաշեն
թաղամասին, ապա Ջրային կոմիտեի ու ՀՀ Արարատի մարզպետարանի
աջակցությամբ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի և ՀՀ Արարատի մարզի Հայանիստ
համայնքի միջև կնքվել է մեծածախ ջրամատակարարման պամանագիր, սակայն
Գետաշեն թաղամասի ջրամատակարարման համակարգերի շինարարական
թերությունների պատճառով հնարավոր չի եղել ապահովել թաղամասի բնականոն
ջրամատակարարումը: Հայտնաբերված թերությունների վերացումից հետո
<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն չի առարկում Հայանիստ համայնքի Գետաշեն
թաղամասի ընդգրկումը ընկերության սպասարկման տարածք:

ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար համայնքում ստեղծված հակասանիտարական վիճակի հետ կապված խնդիրը կկարգավորվի <<Համայնքային ենթակառուցվածքների Ծրագիր (ՀԵԾ) II Փուլ 3>> ծրագրի շրջանակներում Արմավիրի (Մեծամոր) կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումից հետո: Ներկա դրությամբ ավարտվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Կից ներկայացվում է <<ԷկոԼոյ>> տեղեկատվական ՀԿ-ի կողմից բարձրացված ոռոգման խնդիրներին վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր՝ 6 էջ:

23.08.2019


X 

Հարգանքով՝

Վ. ՄԵԼԻԿՅԱՆ

Ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի
վարչություն /010/ 54-04-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԱՐՄԱՎԻՐ»
ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩЕСТВО
ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ
«АРМАВИР»

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ 72
Էլ. փոստ՝ armavir-wua@mail.ru

Թիվ „_____“ 409 „_____“

„ 14 „ 08 . 2019թ.

ԶՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՊԱՐՈՆ Հ. ԳՈՒԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլյան.

Ի պատասխան Ձեր 14.08.2019թ. N: 02/07/3667-19 հանձնարարականի, կապված ՀՀ վարչապետին ուղղված <<ԷկոԼՈՒՐ>> տեղեկատվական ՀԿ նախագահի նամակում ներկայացված մի շարք համայնքներում խմելու և ոռոգման ջրի հասանելիությունը և որակը ուսումնասիրությանը տեղեկացնում ենք, որ Արմավիր ԶՕԸ-ի սպասարկման տարածքում է գտնվում նամակում նշված համայնքներից Արտաշար համայնքը:

Վերջին 10-15 տարիներին Սև ջուր՝ գետի ցամաքելու պատճառով ջրադրյունում առաջացել է ոռոգման ջրի սակավաջրություն: Տարիներ շարունակ Մեծամոր, Արմավիր քաղաքների կոյուղաջրերը հոսում են Արտաշար և Զարթոնք ջրհան կայանների ոռոգման համակարգ և մատակարարում ջրօգտագործողների որպես ոռոգման ջուր: Հատկապես ամռան ամիսներին կոյուղաջրերի մատակարարման պատճառով համայնքներում ստեղծվում է հակասանիտարական վիճակ:

2018թ. ՀՀ Կառավարության կողմից նախաձեռնվել է Սև ջուր գետի սակավաջրության խնդրի, որպես այլընտրանքային լուծում, չգործող խորքային հորերի վերականգնում և նոր հորերի հորատման աշխատանքների կատարման ծրագիր: Պատրաստ են նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Ծրագրվում է 2020թ. իրականացնել շինարարական աշխատանքները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Վ.ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩЕСТВО
ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ
«ЭЧМИАДЗИН»

ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Զվարթնոց թաղամաս
հեռ. (0231) 7-31-10
Էլ. փոստ՝ echmiadzin-wua@mail.ru

№ 01-02/429-19

« 22 » 08 2019թ

Ջրային կոմիտեի
նախագահի տեղակալ՝
պարոն Հ. Գուլյանին

Հարգելի պարոն Գուլյան,

Ի պատասխան Ձեր՝ 14 օգոստոսի 2019թ-ի N:02/07/3667-1/ գրության, հայտնում ենք Ձեզ, որ եմ էջմիածին ՋՕ ընկերության սպասարկման տարածքում գտնվող Տարոնիկ համայնքը ունի կադաստրային 343,5 հա հողատարածք, որից 2019թ-ի ոռոգման սեզոնի համար կնքվել է 120,4 հա-ի պայմանագիր: Համայնքի հողատարածքները ոռոգման ջուր ստանում են Ակնալճի համակարգից՝ Ակնալճի ներքին ջրանցքով և Տարոնիկի 3 խորքային հորերով: Համայնքի ջուրջ 220 հա չի մշակվում, տարեց տարի իջնում է Ակնա լճի ջրի մակարդակը և համայնքի հողատարածքները զրկվում են ոռոգման ջուր ստանալու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք ուսումնասիրել Ակնա լճի ջրի մակարդակի իջեցման պատճառները և կիրառել միջոցառումներ այն շտկելու համար, ինչպես նաև հորատել նոր խորքային հորեր:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝

 ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ք.Երևան, Բաղրամյան 75/44

г.Ереван, ул. Баграмяна 75/44

ՀՇՈԱՆՈՍ 26-00-88

ТЕЛЕФОН 26-00-88

15.08.2019թ.

N08-01/0337

Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ
պր-ն Հ. Գուլյանին

Հարգելի պարոն Գուլյան

Ի պատասխան Ձեր 14.08.2019թ. թիվ 02/07/3667-19 գրության տեղեկացնում եմ, որ Սայաթ-Նովա համայնքը ունի շուրջ 140 հա գյուղ նշանակության ոռոգելի հողատարածքներ, որից 60 հա-ի ոռոգումը իրականացվում է համայնքի համաֆինանսավորմամբ կառուցված և իրենց կողմից շահագործվող ջրհան կայանի միջոցով:

Մնացած շուրջ 80 հա հողատարածքների ոռոգումը իրականացվում է <<Երևան>> ՋՕԸ-ի կողմից: 80 հա-ից շուրջ 20 հա-ը հողօգտագործողների կողմից չմշակելու պատճառով չի ոռոգվում: Վերջիններիս մշակելու դեպքում ՋՕԸ-ն պատրաստ է ապահովելու ոռոգման ջրով: <<Երևան>> ՋՕԸ-ն ոռոգումը իրականացնում է Սայաթ-Նովայի ջրանցքով՝ ինքնահոս եղանակով, որը սնվում է Հրազդան գետից: Ինքնահոս ջրի սակավության դեպքում լրացուցիչ շահագործվում է նաև դոտացիոն նպատակով գործող խորքային հորը: Համայնքում գոյություն չունի ոռոգման երեսապատված ներքին ցանց, այն ամբողջությամբ հողային հունով է, որն էլ նպաստում է ավելորդ ջրակորուստներին: Նշենք նաև, որ ներտնտեսային ցանցը համարվում է համայնքային սեփականություն:

Հայանիստ համայնքը ունի շուրջ 90 հա գյուղ նշանակության ոռոգելի հողատարածքներ, որից 15 հա-ի ոռոգումը իրականացվում է համայնքի համաֆինանսավորմամբ կառուցված և իրենց կողմից շահագործվող ջր/կայանի միջոցով:

Մնացած 75 հա-ից ՋՕԸ-ի ուժերով ոռոգվում է 40 հա-ը: 35 հա-ը չի ոռոգվում ոռոգման ցանցի բացակայության պատճառով:

Գործադիր տնօրեն՝

Մ Ասատրյան

Կատ՝ ջրօգտագործման Ի և Հ
բաժնի պետ
Ա. Դավթյան



«ՄԵԼԻՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0812 Արարատի մարզ, գ. Հայանիստ, Էջմիածնի փ. 22, հեռ. +37496004995, էլ. փոստ՝ melioracia00@mail.ru

22.08.19 № 380-ՎՖ Ձեր _____ № _____

Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ
պարոն՝ **Հ. Գուլյանին**

Հարգելի պարոն Գուլյան

Համաձայն Ձեր ս.թ. օգոստոսի 14-ի N 02/07/3667-19 հանձնարարականի, կապված «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Ջարաֆյանի նամակը ուղղված ՀՀ վարչապետին, որը վերաբերվում է Արարատյան հարթավայրի ստորերկրյա ջրերի օգտագործման և պահպանման հարցերին, հայտնում եմ հետևյալը:

Իրոք, Արարատյան հարթավայրի ստորերկրյա ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության հարցերն արդիական են և կարիք ունեն մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրության՝ նրա բնական վիճակը վերականգնելու համար:

Ներկայացված ծրագիրը կարևոր նախաձեռնություն է հարցին լուծում տալու նպատակով, որի համար այն կարելի է հիմք ընդունել:

Միաժամանակ հայտնում եմ, որ հիշյալ ծրագրով աշխատանքների իրականացման արդյունքում կբարելավվի նաև Արարատյան հարթավայրում այժմ գործող կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակը, քանի որ հարթավայրում ստեղծված ձկնաբուծական տնտեսությունների ջրերը հեռացվում են հիմնականում Կոլեկտորադրենաժային ցանցի միջոցով: Ստեղծված պայմաններում բարձրանում են գրունտային ջրերի մակարդակները հարթավայրի ցածրադիր հատվածներում և բարդանում է Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և շահագործման աշխատանքները, հետևապես նաև ծախսերը:

Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 416-Ն որոշման 3-րդ կետի, ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է դրենաժային համակարգերի շահագործման կազմակերպության, տվյալ դեպքում «Մելիորացիա» ՓԲԸ-ի, համաձայնությունը, սակայն մինչև օրս ոչ մի ձկնաբուծական տնտեսություն այդ հարցով չի դիմել:

Հարկ է նշել նաև, որ ստորերկրյա ջրերի անխնա օգտագործումը կարող է առաջացնել նաև Արարատյան հարթավայրի ջրագրված բնակավայրերի սանիտարահիգիենիկ պայմանների վատացում, ինչպես նաև տեղի կունենան անապատացման երևույթներ:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից Արարատյան հարթավայրի Կոլեկտորադրենաժային ցանցերից հեռացվող ջրերի չափագրման արդյունքները ցույց են տվել, որ ձկնաբուծական տնտեսությունների հիմնական մասը /շուրջ 90%/ խախտելով ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված ջրահեռացման պայմանները հետադարձի ջրերը լցնում են կոլեկտորադրենաժային ցանցեր՝ խաթարելով նրանց բնականոն աշխատանքը:

Համաձայն մոնիտորինգի տվյալների կոլեկտորադրենաժային ցանցերը մինչև 2002թ. աշխատում էին արդյունավետ, նախագծային թողունակությամբ, ապահովելով շուրջ 36,3 խմ/վրկ կամ 1144,8 մլն.խմ/տարի ջրերի հեռացումը դեպի Մեծամոր, Հրազդան և Արաքս գետեր: Սկսած 2003թ. (Արարատյան դաշտում ձկնաբուծության տարածման զարգացման սկիզբը) կոլեկտորադրենաժային ցանցերով հեռացվող ջրերի ծավալները, սկզբում աստիճանաբար, իսկ 2009թ. կտրուկ աճեցին՝ 2013թ. կազմելով 58,11 խմ/վրկ կամ 1832,6 մլն.խմ/տարի, ինչը շուրջ 60 %-ով գերազանցում է ցանցերի նախագծային թողունակությունը:

Առդիր՝ Արարատյան դաշտի կոլեկտորադրենաժային ցանցի ջրի միջին տարեկան ելքերն ըստ տեղամասերի 1997-2018թթ.:

Տնօրեն՝

Ա. Ֆահրադյան

Արարատյան դաշտի կոլեկտորադրենաժային ցանցի ջրիմիջինտարեկան ելքերնրստ տեղամասերի 1997-2018թթ.

№	Կոլեկտորի, ջրհավաքի անվանումը	Հենակետի համար	Միջին տարեկան ելքերը, խմ/վրկ.																		Միջին*	
			2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017		2018
			Սեջուր-Քասախի տեղամաս																			
1	Արգավանդի կոլեկտոր	1	0,24	0,25	0,10	0,16	0,13	0,18	0,13	0,18	0,11	0,10	0,06	0,06	0,05	0,030	0,006	0,024	0,057	0,016	0,009	0,11
2	Մարգարայի կոլեկտոր	1ա	0,10	0,04	0,03	0,03	0,04	0,05	0,05	0,07	0,04	0,04	0,04	0,03	0,02	0,010	0,029	0,005	0,00	0,00	0,0	0,034
3	Կոբու-Արտաշարի կոլեկտոր	4	0,52	0,66	0,66	1,38	1,59	1,93	1,47	1,49	0,95	0,87	0,48	0,52	0,42	0,24	0,075	0,042	0,10	0,050	0,12	0,91
4	Կոլեկտոր 1	9	0,68	0,59	0,48	0,54	0,37	0,45	0,57	0,35	0,33	0,39	0,26	0,32	0,25	0,19	0,065	0,19	0,19	0,19	0,10	0,38
5	Ջրհավաք 7	10	0,58	0,41	0,36	0,45	0,30	0,34	0,32	0,20	0,16	0,16	0,10	0,20	0,05	0,06	0,011	0,88	0,38	0,18	0,16	0,29
6	Կոբու-Ապագայի կոլեկտոր	11	0,99	1,04	1,12	1,26	2,00	2,06	2,30	2,48	2,45	2,72	2,29	2,18	2,16	1,55	1,22	1,32	1,22	1,94	1,37	1,73
7	Քուռու-Արաքսի կոլեկտոր	12	3,28	2,27	3,23	3,51	4,55	5,43	4,63	5,07	4,40	5,12	3,98	3,32	2,98	1,61	1,47	0,68	1,61	1,29	1,11	3,33
8	Կոլեկտոր 5	12ա	0,36	0,50	0,33	0,34	0,50	0,47	0,51	0,57	0,45	0,44	0,45	0,52	0,41	0,36	0,33	0,60	0,48	0,41	0,42	0,45
9	Ջրհավաք 10ա	12բ	0,33	0,19	0,38	0,38	0,48	0,45	0,51	0,87	1,25	1,11	1,24	1,50	0,99	0,98	1,08	1,08	1,29	0,99	0,64	0,79
10	Ջրհավաք 1	9ա	0,22	0,22	0,30	0,29	0,22	0,23	0,34	0,36	0,18	0,20	0,11	0,15	0,07	0,05	0,024	0,016	0,015	0,11	0,015	0,17
ԸՆԴԱՄԵՆԸ			7,30	6,17	6,99	8,34	10,18	11,59	10,83	11,64	10,32	11,15	9,01	8,80	7,42	5,08	4,31	4,84	5,34	5,08	3,94	8,18
			Աջափնյա Հրազդանի կոլեկտորի տեղամաս																			
			1-ին տեղամաս																			
1	Աջափնյա Հրազդանիկոլեկտոր	15ա	6,49	8,12	7,77	6,74	6,42	7,99	8,49	8,67	11,8	12,17	12,8	13,4	15,02	16,3	18,12	14,0	15,5	17,6	14,64	11,21
2	Ջրհավաք 10	11ա	0,47	0,46	0,25	0,30	0,46	0,46	0,64	0,80	0,43	0,47	1,09	2,42	1,56	2,13	2,82	2,32	2,09	2,22	2,12	1,17
ԸՆԴԱՄԵՆԸ 1-ին տեղամաս			6,96	8,58	8,02	7,04	6,88	8,45	9,13	9,47	12,25	12,64	13,89	15,82	16,58	18,43	20,95	16,30	17,59	19,82	16,76	12,38
			2-րդ տեղամաս																			
3	Աջափնյա Հրազդանի կոլեկտոր	18	0,92	1,08	1,20	1,09	1,06	1,19	1,39	1,03	1,41	0,99	1,11	1,44	1,55	1,15	1,05	1,72	1,34	0,67	0,91	1,14
4	Կոլեկտոր 1(Նորամարգ)	23	0,51	0,51	0,51	0,57	0,51	0,46	0,72	0,68	1,29	1,05	0,88	1,46	1,23	1,02	1,60	2,03	0,75	0,84	0,98	0,89
5	Կոլեկտոր 2 (Նորամարգ)	24	0,96	0,96	0,96	1,09	0,96	1,04	1,41	1,31	1,44	1,25	1,19	1,62	2,52	2,18	2,43	1,98	1,97	1,49	1,22	1,42
ԸՆԴԱՄԵՆԸ 2-րդ տեղամաս			2,39	2,55	2,67	2,75	2,53	2,69	3,52	3,02	4,14	3,29	3,18	4,52	5,30	4,35	5,09	5,73	4,06	3,00	3,11	3,45
ԸՆԴԱՄԵՆԸ 1-2 տեղամաս			9,35	11,13	10,69	9,79	9,41	11,14	12,65	12,49	16,39	15,93	17,07	20,33	21,88	22,78	26,04	22,04	21,65	22,82	19,87	15,83
			Ջախափնյա Հրազդանի կոլեկտորի տեղամաս																			
1	Ջախափնյա Հրազդանիկոլեկտոր	19	7,75	6,47	5,86	6,62	4,95	5,87	6,14	6,33	5,84	6,92	9,52	5,61	7,77	8,68	8,69	8,65	6,84	6,78	6,95	6,94
			Հրազդան Արաքսի կոլեկտոր																			
1	1-ին տեղամաս	25	1,85	1,92	1,58	2,02	2,11	2,03	2,10	2,10	2,10	1,81	1,89	3,79	2,98	5,02	3,24	7,77	8,59	8,09	9,11	3,48
2	2-րդ տեղամաս	30	6,88	5,90	7,18	9,45	10,44	10,33	7,30	9,12	8,25	8,62	10,74	8,75	10,8	9,51	9,91	12,6	11,4	11,6	12,18	9,22
3	Արազդայանի գլխ. կոլեկտոր	32	3,83	3,83	4,00	4,92	5,68	6,50	7,44	7,26	5,14	5,17	6,77	6,76	5,26	7,04	4,91	4,33	5,08	4,12	5,10	5,21
ԸՆԴԱՄԵՆԸ			12,56	11,65	12,76	16,39	18,23	18,86	16,84	18,48	15,50	15,60	19,40	19,30	19,04	21,57	18,06	16,93	16,48	15,72	17,28	16,30
ԱՄԲՈՂԸ			36,96	35,42	36,31	41,14	42,77	47,46	46,46	48,94	48,05	49,61	55,00	54,04	56,11	58,11	57,10	52,46	50,21	50,37	48,02	47,25
ՏԱՐԵԿԱՆ ՀՈՒՍԸ (հազ.խմ.)			1165,6	1117,0	1145,1	1297,4	1348,8	1496,7	1465,2	1543,4	1515,3	1564,5	1734,5	1704,2	1769,5	1832,6	1800,7	1654,0	1583,6	1589,5	1514,6	1490,16

*բազմամյա միջին տարեկանը հաշվարկված է 1997-2018թթ. ժամանակահատվածի համար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՂԵԿԱՎԱՐ

N _____

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☎ (374-10) 65-05-53, 65-46-95

“ ____ ” _____ 2019թ.

Ֆաքս. (374-10) 65-16-60

Էլ. փոստ info@aatm.gov.am

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն նախարար

Ի կարարումն ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 7-ի N 02/12.2/35896-2019 հանձնարարականի՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ Արարատի մարզի Հայանիստ, Սայաթ-Նովա և Արմավիրի մարզի Արտաշար, Տարոնիկ համայնքներում հարուցվել են վարչական վարույթներ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Զրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 և 2002 թվականի նոյեմբերի 11-ի N 803 հրամանով հաստատված «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N 2-III-Ա2-2 սանիտարական կանոններով և նորմերով սահմանված պահանջների պահպանումը պարզելու նպատակով, որոնք ուղեկցվել են խմելու նպատակով օգտագործվող ջրի նմուշառումներով՝ ջրի որակի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու նպատակով: Զննման ժամանակ պարզվել է.

Արարատի մարզի Հայանիստ համայնք.

Համայնքի ջրամատակարարման համակարգը, բացառությամբ Գետաշեն թաղամասից, շահագործվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, որն էլ իրականացնում է արտադրական հսկողությունը: Գետաշեն թաղամասի ջրամատակարարումը (ինչպես խմելու, այնպես էլ ոռոգման նպատակով) իրականացվում է երկու արտեզիան հորատանցքերի միջոցով, ընդ որում ոռոգման նպատակով օգտագործվող ջրի սպասարկումը ամռան ամիսներին իրականացվում է «Երևան» ԶՕԸ-ի կողմից, իսկ դեկտեմբեր-մարտ ամիսներին՝ ամենամյա կնքված ընդունման-հանձնման ակտի համաձայն՝ այն հանձնվում է համայնքի տնօրինությանը: Թաղամասին խմելու նպատակով ջուրը տրվում օրական 4 ժամ՝ 16⁰⁰-20⁰⁰: Գետաշեն թաղամասին մատակարարվող խմելու ջրի որակի արտադրական հսկողություն չի կատարվում:

Արարատ մարզի Սայաթ-Նովա համայնք.

Համայնքը չունի կենտրոնացված ջրամատակարարման համակարգ: Համայնքի տարածքում կա 17 արտեզիան հոր, որոնցից ստացվող ջուրը օգտագործվում է և ոռոգման, և խմելու նպատակներով, ընդ որում, որպես ոռոգման ջուր սպասարկվում են «Երևան» ԶՕԸ-ի կողմից: Նշված հորերից, որոնք ինքնահոս ճնշումային են, բնակիչների ջրամատակարարման ինքնավար համակարգերի, անհատական սարքավորումների միջոցով ապահովել են իրենց բնակելի տները ջրով: Խմելու նպատակով օգտագործվող ջրի որակի արտադրական հսկողություն չի իրականացվում:

Արմավիրի մարզի Տարոնիկ համայնք.

Համայնքը չունի կենտրոնացված ջրամատակարարման համակարգ, համայնքում գործում է երկու խմելու ջրի աղբյուր, որտեղից օգտվում են բնակիչները: Համայնքի տարածքում ներկայում իրականացվում են ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ: Համակարգը սնուցվելու է 85մ խորությամբ հորատանցքից և ապահովելու է 120 տնտեսությանը խմելու ջրով: Ներկայում, օրական մեկ ժամով ջուրը տրվում է տնտեսական նպատակներով: Խմելու նպատակով օգտագործվող ջրի որակի արտադրական հսկողություն չի իրականացվում:

Արարատի մարզի Արտաշար համայնք.

Համայնքի ջրամատակարարումը իրականացվում է 2 հորատանցքերից սնվող համակարգերի միջոցով, օրական 12-18 ժամ, որի շահագործումն ու արտադրական հսկողությունը կատարվում է պայմանագրային հիմունքներով: Ջրաղբյուրները չունեն սանիտարապաշտպանական գոտի, խողովակները հին են:

Լաբորատոր փորձաքննության արդյունքների և վարչական վարույթի հետագա ընթացքի վերաբերյալ կտրվի լրացուցիչ տեղեկատվություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԷՄԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

21.08.2019

X 

VERIFIED OCSP 21.08.2019 15:03:56 GMT+4

Подписано: AVETISYAN EMIN 3401860054

Կատարող՝
Լիլիթ Գաբրիելյան
ՀՍՀՎ երահսկողության վարչություն
հեռ. 650553/32



ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ.փոստ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 613
E-mail: scws@scws.am

<<____>> _____ 2019թ. N _____

Ձեր _____ 2019թ. N _____

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
պրն Ս. Պապիկյանին

Հարգելի պարոն Պապիկյան

Ի պատասխան Ձեր 30.08.2019թ.01/15.2/12758-19 և ի լրումն Ջրային կոմիտեի 26.08.2019թ. N01/08/3849-19 գրությունների՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի գրության 4-րդ և 6-րդ էջերում ներկայացված հարցադրումների վերաբերյալ, Ջրային կոմիտեի իրավասությունների սահմաններում, հայտնում եմ, որ խմելու, կենցաղային կարիքների համար օգտագործվող ջրի որակին ներկայացվող պահանջները կարգավորվում են 28.12.2002թ. ՀՀ առողջապահության նախարարի N803 հրամանով հաստատված <<խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ>> N2-III-Ա2-2 սանիտարական նորմերով և կանոններով:

<<խմելու ջրի մասին>> ՀՀ օրենք մշակելու վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 06.09.2018թ. N 1030-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված՝ ՀՀ կառավարության 2018-2022թթ. գործունեության միջոցառումների ծրագրով, Ջրային կոմիտեի կողմից նախատեսվող աշխատանքներում նախատեսված չէ: Անհրաժեշտության դեպքում, բավարար հիմնավորումների առկայության պարագայում, հարցը կքննարկվի 2022թ-ից հետո: Առայժմ համարում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարի վերոնշված հրամանով սահմանված ստանդարտները բավարար են բնակչությանը համապատասխան որակի խմելու ջրով ապահովելու համար:

Ինչ վերաբերում է ջրային ռեսուրսների հետ կապված հարցադրումներին՝ ստորերկրա ջրերի հաշվեկշիռների վերականգնմանը, պահպանմանը և այլն, ապա հայտնում ենք, որ այդ հարցերը դուրս են Ջրային կոմիտեի իրավասությունների տիրույթից:

Խմելու ջրի մատակարարման ոլորտում հարաբերությունների կարգավորման վերաբերյալ, հայտնում եմ, որ կողմերի իրավահարաբերությունները կարգավորվում են՝ ՀՀ կառավարության՝ ի դեմս Զրային կոմիտեի և <<Վեոլիա Զուր>> ՓԲԸ-ի միջև 2016թ-ի նոյեմբերի 21-ին կնքված Վարձակալության պայմանագրով, որտեղ հստակ նշված են Վարձատուի և Վարձակալի պարտականություններն ու իրավունքները: Մատակարար կազմակերպության գործունեությունը՝ Վարձակալության պայմանագրի շրջանակներում, վերահսկվում է անկախ տեխնիկական աուդիտորի կողմից, որի ընտրությունը կատարվել է միջազգային մրցույթի արդյունքներով: Մատակարարի և բաժանորդների փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ համապատասխան իրավական ակտերով և որոշումներով:

Ոռոգման ջրի մասով բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում եմ, որ առաջարկվող փոփոխությունները կքննարկվեն ջրօգտագործողների ընկերությունների մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից և կներառվեն օրենքի փոփոխության նախագծում:

12.09.2019

X 

Հարգանքով՝

/Վ. ՄԵԼԻԿՅԱՆ

Զրամատակարարման և ջրահեռացման
համակարգերի վարչություն
հեռ. /010/ 54-72-83

Ոռոգման և կոլեկտորադրենաժային
համակարգերի վարչություն
հեռ. /010/54-06-15



Nº _____

« _____ » 2019թ.

Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
պարոն Ս.Պապիկյանին

Հարգելի պարոն Պապիկյան

Ի կատարումն վարչապետի 2019 թվականի օգոստոսի 6-ի N02/12.2/35896 հանձնարարականի՝ Արարատյան դաշտի համայնքներում ջրի անարդարացի բաշխման և համապատասխան որակի ու քանակի խմելու և ոռոգման ջուր ունենալու համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը, ուստի չունի պարտավորություններ վերջինիս նկատմամբ:

Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N666-Լ որոշման հավելվածով հաստատվել է «Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի և դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկմամբ ճանապարհային քարտեզը», ինչով նախատեսվում է վերանայել խմելու ջրի ստանդարտները՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային ստանդարտներին:

Հայանիստ, Սիփանիկ, Սայաթ-Նովա համայնքներում գործող ձկնաբուծարաններում իրագործվում է ձկնաբուծարանների ջրի երկրորդային օգտագործման պիլոտային ծրագիր և Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների գերշահագործումը կանխելու նպատակով՝ մասնավորապես 19 ձկնաբուծարաններում տեղադրվել են առցանց հոսքաչափեր:

Հայտնում եմ նաև, որ համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 21-րդ հոդվածի. <<Ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն,>>:

Ջրօգտագործման թույլտվության ստացման համար ջրօգտագործողը պետք է շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնի ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 218-Ն որոշման համաձայն ջրօգտագործման թույլտվության ստացման հայտ՝ կցելով պահանջվող փաստաթղթերը, ինչն էլ սահմանված կարգով կգնահատվի:

Հարգանքով՝

Նախարարի պարտականությունները կատարող



8/20/2019

X



ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻԿՅԱՆ

Signed by: MELIKYAN VARDAN 1901820505

Վ.Մելիքյան

ՋԹ բաժին
Ն.Կաչյանց
011-818-541